

մաժայն յոյն բնագրին, ինչպէս նաեւ հայ թարգմանիչներէն ազատ յիշատակու թիւնը, զոր մեր նախնիք սովոր են ընել յաճախ՝ բնագրերէն հայ բարբերուն մօտեցնելու համար, ինչպէս ցոյց տուած եմ այլուր<sup>1</sup>։ Եւ երկու պարագային ալ իրաւունք կը ստանանք հետեցնելու՝ թէ այդ խաղերը, զոր թարգմանիչը պահեցին բնագրաց մէջ ու լրացուցին, արդէն բոլոր հին քաղաքակիրթ աշխարհին ծանօթ, ընտանի էին մեզ ալ, որ բազմապատիկ կապեր ունեցած ենք Յունաց հետ, որոց իշխանութեան ներքեւ էր Հայաստանի մէկ մասը Դ դարէն, և որոց ցով զաստիարակուած պիտի տեսնենք մեր մտաւորականներէն շատերը։ Այս բոլորը գրաւական են մեզ ընդմիջուելու՝ թէ յիշեալ խաղերը դիրաւ պիտի հայանային, և յետոյ երթալով բազմանային, ինչպէս կ'երևին մինչև մեր օրերը հայ գաւառաց մէջ, և զորս հաւաքեցին ու նկարագրեցին բանասէրք<sup>2</sup>։

Խալարիկները եթէ կը սկսէին մանկու թեան հետ, բոլորն ալ նոյն հասակին հետ չէին վերջանար։ Անոցմէ ոմանք կը շարունակէին կազմել նաեւ հայուն հասակին զօրանքը, ինչպէս վերոյիշեալ վկայութեանց մէջ կը նշմարուի։

Այժմ տեսնենք մեր հին աշխարհի ծանօթ խալարիկները մի առ մի, անոնց նկարագրութիւնն որոնելով յոյն կամ հռովմէական հնախօսութեանց մէջ, որ պիտի լրացնեն մեր հին մատենագրութեան թերրին։

Հ. Վ. ՀԱՅՏՈՒՆԻ

(Շարունակելի)



## ԼԵՂՈՒԱԳԻՏԱԿԱՆ

### ՀԱՅՏԵՐԸՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՈՑ ԱԳԱՄԳՐԻՔՆ ՄԷՋ

(ՏԳ. ՎԿԵՆԻԿ 1907)

Արեւակոյս. գործածուած է ուս հետեւեալ տան մէջ. Ի կոյս մօրէ նա ծնանի, և կոյս մարմնով յերկրի անանի. աթեւակոյս զրով կնքի, և ի կոյս վիմէ յաւուցանի (էջ 181)։ Անշուշտ յն. 'Aθηνά քառէն, որ է «Աստուածուհին իմաստութեան, դուստր Արամազդայ»։

Ամար. «անշէջ, չմարող»։ Ձնա մեռուցեր և դու մեռար կրկին մահուամբ ի բոցն անմար (էջ 300)։

Անուշիմ. «անխելք, անմիտ»։ Ձանձրախորհորդ և անուշիմ և անհանձար ամենն էին. երբ զքեզ խաբեց օձն ի ծառին, չասի «Դո՛ւ կեր որ ես ունիմ» (էջ 312)։

Գեթ. «վնաս, յանցանք»։ Եւ քեզ աւսեմ, ո՛ւ՜ խորագէտ, որ ուսուցեր զկինն տգէտ, թեպէտ յանցանք էր այդ և գեթ, բայց ո՛չ ի քէն, այլ ի չարէդ (էջ 93)։ Գործածական է նաեւ Տփղիսի բարբառին մէջ նոյն իմաստով։ Ասկէ կազմուած է գիրովոր «մեղապարտ, յանցաւոր», որ մէկ անգամ գործածուած է յետին զբրուածքի մը մէջ (տպ. Записки, 11, 75)։ «Որպէս վախեցար դու ի ձայնէ փողոյն իմոյ, որ չես ինձ վնասակար, նոյնպէս և ես զարհուրիմ քո ձայնէ փողոյն՝ որ կոչէ զիս զատաստան»։ զի գիթվոր եմ Աստուծոյ, սեւերես և պարտական»։ Մառ (անդ) այս բառը կը հանէ պրս. gid «վախկոտ» բառէ մը, որ չեմ գտներ Գէորդ զարի բառարանին մէջ և ասկէ զատ չի յարմարի իմաստով։

Դժպահակ. «անբարեկեցի, դժուարմըրոնելի»։ Յետոյ ի խաչ գալ Արարչին, այս՝ խորհրդոց է դժպահակ. բայց այս նմա է գիտելի՝ որ է բնութեամբ անեղ զոյակ (էջ 284)։ Կ'ուզէ ըսել թէ Արարչին խաչուելը մեր մտքին համար անըմ-

1. Զուրկ, 98-5, 229. — 2. Զրթ. ևն.

բռնելի բան մ'է: Խմաստին լուսաբանութեան համար հմտ. ասոր յաջորդ տու, նը՝ այլ ձեռագրի մը մէջ. «Մահուամբ զմահն լուծեալ, այս՝ մեր մտաց է հակառակ, են»: — Բառս յարմարացուած է դժգոհի ձևին վրայէն. հմտ. դժպտութիւն:

Ելուն «դուրս ելած, դուրս ցցուած». Եւ գի կողն է բնութեամբ ելուն, վասն այն չեկաց առ իւր մարդոյն (էջ 125):

Բնորոպէ «յետին մնացորդ, տկուր, տակը մնացած գէջ մասը». Միթէ ընտրուկս եմ եղելոց և վերջին մասն արաւածոց, վասն այն ես մայր եղէ ցաւոց, չարչարանաց և դժոխոց (էջ 114): Ասոր հետ հմտ. բնորոպէ «անխտիր ընտրած՝ ժողված բաներ»: Խմաստը յառաջացած է մաղի օրինակէն, երբ ցորեն կամ ուրիշ հատիկէններ շարժելով՝ մէջտեղը հաւաքուած քարերը և այլ օտար նիւթերը կ'ընտրեն ու կը նետեն:

Ժժմուք «ցնորական տեսիլքներ, աչքին երեցած բաներ». Եւ ընդ ցելուլ վարագուրին՝ մեր վարագոյր մտաց լուծցին, անմիջաբար դիտել զբարին, առանց ժժմանց մարմնականին (էջ 213): Նոր Հայկ. Բառ. այս բառը կը մեկնէ «խժըւտոց, խառնիխուռն ձայներ», որուն իբր վկայութիւն կը բերէ Վաստակոց գիրքը: Բայց Վաստակոց գրոց մէջ ժժմուք բնաւ այսպիսի իմաստով գործածուած չէ. ահա այդ գրքին մէջ գտնուած բոլոր օրինակները. — կերիչքն և ֆնասակար ժժմունքն ի կեղեն կու բնակին (էջ 64). Զփիլին ոսկրն թըջեն ջրովն զսեւի մշշեն և զինքն ևս ի ներք խառնեն և շփեն և միաւորեն ընդ սերմանցն և ցանեն, նա պահէ զնոյն սերմն յամենայն կերչաց և ժժմանց (էջ 19). Յաղագս ոչլի և այլ ազգ մանր ժժմանց՝ որք հարկանեն ըզտունեն (էջ 76). Բնաւ ժժմունքն չմեռնենան. Զժժմունան սպանանէ (էջ 76): Այս բոլորին մէջ ալ պարզ է որ ժժմուք կը նշանակէ «ճճի, միջատ»: Բայց «ճճի» իմաստը չի յարմարի վերի օրինակին մէջ: Այլուր նկատած եմ որ «ճճի, միջատ» նշանակող բառերը ստացած են

նաև «երևակայական ոգի» նշանակութիւնը (տես իմ Կաւառական բառարանս, Բողոքայ բառին տակ), ըստ այսմ ժժմուք բառն ալ յետոյ դարձած է «երևակայական էակ, անըջական տեսիլ», ինչպէս ունինք արդարև Խնուսի գաւառականին մէջ և այս իմաստով գործածուած է նաև հոս:

Լիկ «լերկ, անմազ». Մարդն ծաղկի մօրուաց մազով, բայց կիւնն լեկ է երեսով (էջ 139): Ասիկա, ինչպէս իմաստէն կ'երևայ, նոյն լերկ բառն է, որ անկուսով ձևացած. հետևաբար նոյն բառն է նաև գլուխի (Խ. Խտշ. վն.) «ոչխարի բարակ և լերկ մորթ, կաշի»:

Լորուկ «ծածկուով ուտել». Զմադան մահու պատկեալ ծծէր, զլեղին զերդ մեղր լորուկէ (էջ 316). Զլեղին որպէս շաքար ծածկեալ լաւումէր (էջ 258). հմտ. մանիշ լորումի, լորմի և մանաւանդ գլուխի ձևը:

Խալթալի «շփոթել, միտքը տակնու վրայ ընել». Զար հակառակ և դժնային՝ նախ խալթալեաց մտքը զնախնին (Եւս) և ապա եցոյց զպտուղ ծառին (էջ 315): Ասոր կրաւորականն է խալթալի «միտքը շփոթուիլ, տակնուվրայ ըլլալ». Խալթալեաց միտքն Աղամայ՝ յորժամ ետես խաբեալ գլեւա (էջ 31): Ասիկա հին հայերէնի խալթալի «մաղել» բառն է, որ վերի իմաստով ալ արդէն գործածուած է Ղկ. Իր. 31, Եզն. 181 ևն: Նոյն իսկ Աղամգիրքը էջ 59 կը գրէ կրկին ձևով. «Ստեղծեալ էակ բնութեամբ բարի՝ չար խաբալեալ (այլ ձեռ. խալթալեալ) ապականի»: Ըստ այսմ կը կարծեմ որ նոյն բառն ըլլայ խըղփալովէ «ուշաթափուիլ, ուշքը երթիլ, նուազելով վար իյնալ». Բ > փ փոփոխութեան համար օրինակ կրնանք առնել խաթիլ > գլուխ. խաթիլ:

Խեռային «անսասն, խօսք մտիկ չընող». Սիրտ կնոջն է խեռային, կարծեօք ոխայ ընդ իւր մարդին (էջ 137):

Խօր «բարիք». Զկողն որ առին յիմոյս մարմնոյ, այս ինչ նշան էր ինձ խեռոյ (էջ 130). — Խմաստը պարզաբանելու կը ծառայեն Աղամգրքի երեք ձեռագրերը,

որոնք այս բառին տեղ ունին «բարոյ»։  
 և Արար. خَر خاYT «բարիք» բառն է։

Կատարուն «կատարած»։ Մեծն Կոսայի  
 նմին հանգոյն զձեզ կոչեաց շուն լիբր  
 կատարուն. և լեզուք շանցն կատարուն  
 թաքցի յարեանցն թշնամոյն (էջ 185)։

Կարկափի «պապանձիլ, բերանը բըռ-  
 նուիլ»։ Փշրեալ իմ առամունքս որ զայն  
 ճաշակէր, բերանս իմ կարկափի որ ըզ-  
 մահն ծասկէր (էջ 261)։ — Հմմտ. Կար-  
 կափացեալ «բերանը պապանձուած» (Բե-  
 նիկ, տպ. Սոփեբք, հա. իա, էջ 81)։ —  
 Ըստ այսմ վերի երկտողը կը թարգմա-  
 նուի. «Թող փշրուէին իմ ակոսաներս» որ  
 զայն ճաշակեցին, թող պապանձէր իմ  
 բերանս՝ որ մահը ծամեց»։

Կոտիտ «փականքին մասերէն մէկն է»։  
 Հաւատըն է նիւթ այն բանալեաց, իսկ  
 յոյսն ձև որ զայն զուգեաց. սէլն կոտիտ  
 որ զփական երաց (էջ 146-7)։ Երեւանի  
 բարբառով ունինք կոտիտ «փայտէ փա-  
 կանքին մէջը շինուած մանր առամները»։  
 Կոթմաման «կսկիծէն մեռնելու չափ»։  
 Ի հուրն անկեալ զու պապակին և տո-  
 չորեալ բոցակիցիս. կսկծաման զու մոր-  
 մորին և յաւիտեան ոչ ազատիս (էջ 299)։

Հրոպագին. անձամթ և անստոյգ բառ, որ  
 կարծեմ պէտք է ուղղել հրաշագին. Պէսպէս  
 պարզեան աստուածային բաշխեալ բնու-  
 թեանց գոյեղինին, իր զանազան յոյժ հրո-  
 պագին՝ տպաւորեալք ի միասին (էջ 308)։

Չանձրխտրոնոյլ } «ուսման սէր չունե-  
 Չանձրախտ }  
 ցող, միտքը շուտ ծանծարցող»։ Չանձրա-  
 խորհուրդ և անուշիմ, և անհանճար ա-  
 մեններն (էջ 312)։ Որք բաղձանօք զսա-  
 մեարդան ... բայց թէ իցէ որ ծանծարա-  
 միտ, պարսաւադէտ բանից անկիրթ, նա  
 ոչ առնու զճաշակ բանիդ (էջ 232)։

Ղալ «պայման, ուխտ»։ Դնեմ ես ընդ  
 ազգի քո մեծ դաւ ու սէր (էջ 255)։  
 Բայց նախ սիրով ինձ դաւլ արա որ զայս  
 չասես զու Աղամայ (էջ 21)։ — Արար. ۱۵ qavl «խօսք, խոստում, պայման»  
 բառէն փոխառեալ։

Մէ «յոյս»։ Գործածուած է 20 ան-.

գամ. ինչ. Խնանի անախտ զԱստուած ան-  
 մահ կենաց մէլ (էջ 243)։ Զի զդա ետ  
 օգնական ինձ և կենաց մէլ (էջ 243)։  
 Այլ զդա ի կենդանոյ արար կենաց մէլ  
 (էջ 243)։ Թործամ անշնչանամ՝ կնոջով  
 լիցի մէլ, երբ մահն ոչնչացնէ՝ կնոջով  
 լիցի մէլ (էջ 244)։ Ի քէն ծնանի ծաղիկ  
 անճառ կենաց մէլ (էջ 247 և 263)։ Ու-  
 բախ լիբ և բերկրեալ այլ քեզ կենաց մէլ  
 (էջ 247)։ Եւ տամ ձեզ պատուիրան օգ-  
 նական ու մէլ (էջ 248)։ Այս քեզ նշան  
 սիրոյ և քո ազգին մէլ (էջ 249)։ Ուրախ  
 լիբուք, առէ, զի ես տամ ձեզ մէլ (էջ  
 254)։ Դու բաց զականջ սրտիդ, ես տամ  
 հոգւոյդ մէլ (էջ 255)։ Մնանիս Աստուած-  
 որդի անճառ բարեաց մէլ (էջ 256)։  
 Պտուղն որ ճաշակեաց՝ մեծ փառաց մէլ  
 կէր (էջ 260)։ Կենաց չկայ մէլ, Չունիմ  
 յուսոյ մէլ (էջ 262)։ Դեռ-քեզ այլ մէլ  
 կէր. կայ քեզ կենաց մէլ (էջ 263)։ Որհ-  
 նեալ Յիսուս Աստուած անճառ կենաց  
 մէլ (էջ 269)։ Փառաց և յարութեան և  
 պսակաց մէլ (էջ 272)։ — Աղամբրբի  
 հրատարակիչ Հ. Մ. Պոտուրեան, էջ 243  
 բառս կը մեկնէ «պատճառ, առիթ»։ այս  
 իմաստներն ալ կրնան յարմարիլ, բայց  
 լաւագոյն է ըստ իս «յոյս», ինչպէս  
 բարձածական է մինչև այսօր Ղարաբաղի  
 բարբառին մէջ. Մէլով կոց «յուսով կե-  
 ցի՛ր, յուսա՛»։ Երկուքն ալ կու գան ա-  
 րար. ۱۵ amal, emel «յոյս» բառէն։

Միջուկ «խեղդող»։ Նեխ և մղձուկ իմ  
 թշնամին (սատանային համար կ'ըսէ),  
 զինչ շահեցար այդմ բանի (էջ 312)։  
 Իբր անարգական ածական գործածուած է։  
 Ողորագին «աղաչելով, աղերսելով»։  
 Հարցաքննէր ողորագին, տեսնուլ նշան  
 ինչ երկայային (էջ 202)։

Ուշատար «խեղճաղ, հիանալով ուշա-  
 գնաց եղած»։ Այն ինչ դրախտ էր լու-  
 սափայլ, որ զմեզ արար հենց ուշատար.  
 մտօք կորաց մեք հիացեալ (էջ 102)։

Սահար «ժամ»։ Այն ինչ շար ժամ էր  
 իսաւարի, այն ինչ սահաթ էր ցաւալի  
 (էջ 107)։

2. ԱՅԱՌԵԱՆ